Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ԱՆՀԱՏԱԿԱՆ ԴԻՄՈՒՄԻ ԸՆԴՈՒՆԵԼԻՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

քաղ. Երեւան 17 մարտի 2009թ.

Հայաստանի Հանրապետության Սահմանադրական դատարանի 2-րդ դատական կազմը նախագահությամբ՝ Հ.Նազարյանի, անդամակցությամբ՝ Հ.Դանիելյանի, Ռ.Պապայանի, քննության առնելով «ԲԻ ԼԱՅՆ» ՍՊԸ կողմից ներկայացված դիմումի ընդունելիության հարցը

Պ Ա Ր Զ Ե Ց

1. «ԲԻ ԼԱՅՆ» ՍՊԸ դիմել է Սահմանադրական դատարան, վիճարկելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքում փոփոխություններ եւ լրացումներ կատարելու մասին» ՀՀ 2007 թվականի նոյեմբերի 28-ի ՀՕ-277-Ն օրենքի 75 հոդվածը՝ դրա 5-րդ բաժնում ամրագրված 228 հոդվածի մասի սահմանադրականությունը, միաժամանակ խնդրելով իրավաբանական ուժ հաղորդել մինչեւ 01.01.2008թ. գործող ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 227 հոդվածին:

2. ՀՀ Սահմանադրության 101 հոդվածի 6-րդ կետի հիման վրա «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 69 հոդվածի 1-ին մասը սահմանում է, որ անհատական դիմում կարող է ներկայացվել սահմանադրական դատարան, եթե դիմումատուն հանդիսացել է ընդհանուր իրավասության կամ մասնագիտացված դատարաններում դատավարության մասնակից, **որի նկատմամբ գործը լուծող վերջնական դատական ակտով կիրառվել է** որեւէ օրենքի դրույթ, սպառել է դատական պաշտպանության բոլոր միջոցները, եւ գտնում է, որ **տվյալ գործով կիրառված օրենքի դրույթը** հակասում է ՀՀ Սահմանադրությանը:

Տվյալ դեպքում դիմումում վիճարկվող օրենքի դրույթը (ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքում փոփոխություններ եւ լրացումներ կատարելու մասին» ՀՀ 2007 թվականի նոյեմբերի 28-ի ՀՕ-277-Ն օրենքի 75 հոդվածը՝ դրա 5-րդ բաժնում ամրագրված 228 հոդվածի մասով), ըստ դիմումին կից ներկայացված փաստաթղթերի, դիմումատուի նկատմամբ չի կիրառվել վերջնական դատական ակտով:

Դիմումում բարձրացված հարցը՝ կապված ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի ուժը կորցրած նորմին կրկին իրավաբանական ուժ հաղորդելու հետ, չի բխում ՀՀ սահմանադրական դատարանի՝ ՀՀ Սահմանադրության 100 հոդվածով նախատեսված եւ «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքով մանրամասնված լիազորություններից:

Հետեւաբար, ղեկավարվելով ՀՀ Սահմանադրության 100 հոդվածի, 101 հոդվածի 6-րդ կետի, «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 68 եւ 69 հոդվածների պահանջներով, ՀՀ ՍԴ 2-րդ դատական կազմը

Ո Ր Ո Շ Ե Ց

«ԲԻ ԼԱՅՆ» ՍՊԸ դիմումի քննության ընդունումը մերժել:

Նախագահող՝ Հ.Նազարյան

Անդամներ՝ Հ.Դանիելյան

Ռ.Պապայան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՆԿԱԽ ԴԱՏԱՐԱՆ
ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ